

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՆԻՇԵՐԻ ՕՐԵՐ



Ամեն շաբաթ **7** հեծանիվ



ԳՈՒՄԱՐԻ ՏՆՏԵՍՈՒՄ + ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացնում ենք 18.05.2015թ. -ին կայացած 7 հեծանիվի խաղարկության շահող կտրոնների համարները և շահած հեծանիվները.

կտրոն 0552՝ հեծանիվ Trek 820 18 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 0622՝ հեծանիվ Trek 820 16 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 0651՝ հեծանիվ Trek 820 18 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 0680՝ հեծանիվ Trek 820 19.5 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 1606՝ հեծանիվ Trek 820 18 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 1296՝ հեծանիվ Trek 820 16 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 1162՝ հեծանիվ Trek 820 18 BK-RD, գույնը՝ սև

Ստորև ներկայացնում ենք 11.05.2015թ. -ին կայացած 7 հեծանիվի խաղարկության շահող կտրոնների համարները և շահած հեծանիվները.

կտրոն 0957՝ հեծանիվ Trek 820 13 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 0430՝ հեծանիվ Trek 820 19.5 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 0959՝ հեծանիվ Trek 820 18 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 0222՝ հեծանիվ Trek 820 13 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 0606՝ հեծանիվ Trek 820 21 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 0236՝ հեծանիվ Trek 820 19.5 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 0915՝ հեծանիվ Trek 820 21 BK-RD, գույնը՝ սև

Ստորև ներկայացնում ենք 04.05.2015թ. -ին կայացած 7 հեծանիվի խաղարկության շահող կտրոնների համարները և շահած հեծանիվները.

կտրոն 0115՝ հեծանիվ Trek 820 21 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 0258՝ հեծանիվ Trek 3500 D 18 RD, գույնը՝ կարմիր
կտրոն 0337՝ հեծանիվ Trek 820 19.5 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 0014՝ հեծանիվ Trek 3500 D 19.5 GN, գույնը՝ կանաչ
կտրոն 0110՝ հեծանիվ Trek 820 18 BK-RD, գույնը՝ սև
կտրոն 0188՝ հեծանիվ Trek 3500 D 19.5 RD, գույնը՝ կարմիր
կտրոն 0274՝ հեծանիվ Trek 820 13 BK-RD, գույնը՝ սև

ԱԿՑԻԱ

«ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՆԻՇԵՐԻ ՕՐԵՐ ԶԻԳԶԱԳՈՒՄ»

ՊԱՅՄԱՆՆԵՐ

27.05.2015թ.

1. **Ակցիայի անվանումը՝** «Գերմանական և Ճապոնական ապրանքանիշերի օրեր Զիգզագում» (այսուհետ՝ «Ակցիա»):
2. **Ակցիայի կազմակերպիչ՝** «Զիգզագ» ՍՊԸ (այսուհետ՝ «ԶԻԳԶԱԳ»):
3. **Ակցիայի սկիզբը՝** 27.04.2015թ., **ավարտը՝** 18.05.2015թ.:
4. **Ակցիայի անցկացման վայրը՝** ԶԻԳԶԱԳԻ բոլոր վաճառասրահներ:
5. **Խաղարկության անցկացման վայրը՝** «Զիգզագ Մեգասթոր» վաճառասրահ:
6. **Ակցիայի մասնակիցները՝** ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրաբանական անձ չհանդիսացող կազմակերպություններ, անհատ ձեռնարկատերեր, որոնք սույն պայմաններին համապատասխան ձեռք են բերում Ակցիային մասնակցող ապրանքներ (այսուհետ՝ «Գնորդ» կամ «Գնորդներ»):
7. **Ակցիայի նպատակը՝** Ակցիայի շրջանակներում Գնորդներին առաջարկվում է երկու շահավետ պայման՝ «ԳՈՒՄԱՐԻ ՏՆՏԵՍՈՒՄ» և «ՀԵԾԱՆԻՎՆԵՐԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆ»: Սույն թվականի ապրիլի 27-ից մայիսի 17-ը ներառյալ հայտարարվում է Գերմանական և Ճապոնական ապրանքանիշերի օրեր ԶԻԳԶԱԳՈՒՄ, որոնց շրջանակներում Գնորդներին հնարավորություն է ընձեռնվում ձեռք բերել ԶԻԳԶԱԳԻ վաճառասրահներում գերմանական և Ճապոնական ապրանքանիշերի նշված էլեկտրատեխնիկական և կենցաղային ապրանքները մինչև 15% իջեցված գներով և **ՏՆՏԵՍԵԼ ԳՈՒՄԱՐ**, նաև **ՍՏԱՆԱԼ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՀԵԼՈՒ TREK ապրանքանիշի արժեքավոր հեծանիվ**, մասնակցելով ամեն շաբաթ անցկացվող 7 հեծանիվների խաղարկությանը:
8. Ակցիային, սույն Պայմաններով սահմանված կարգով, մասնակցում են **Bosch, Siemens, Sony, Panasonic, Miele, Liebherr, Loewe, Funai, Kenwood, Pioneer, Rowenta, Krups, Hama, Toshiba, Beurer, Thomas, Honda** ապրանքանիշերի էլեկտրատեխնիկական և կենցաղային ապրանքները:
9. «ԳՈՒՄԱՐԻ ՏՆՏԵՍՈՒՄ» մասով Ակցիային մասնակցում են **գերմանական և Ճապոնական ապրանքանիշերի** այն ապրանքները, որոնց վրա առկա են միաժամանակ նախկին և նոր՝ Ակցիայի ընթացքում գործող գնանշումներով գնապիտակներ (այսուհետ այդ ապրանքները կանվանվեն՝ «Գումարի տնտեսումով ապրանք» կամ «Ապրանք»): Գումարի տնտեսումով ապրանքներին չեն դասվում «Թեժ գին», «Նոր գին» և այլ հատուկ առաջարկների տեսքով և միայն գործող գնանշումով ներկայացված ապրանքները:
10. Սույն թվականի **ապրիլի 27-ից մայիսի 17-ը ներառյալ** Գնորդը հնարավորություն է ստանում ձեռք բերել Գումարի տնտեսումով ապրանքներն **իջեցված գներով** և տնտեսել գումար:
11. «ՀԵԾԱՆԻՎՆԵՐԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆ» մասով Ակցիային մասնակցում են **գերմանական և Ճապոնական ապրանքանիշերի** այն ապրանքները (այսուհետ՝ «Խաղարկության մասնակցության ապրանք» կամ «Ապրանք»), որոնք
 - 11.1 հանդիսանում են Գումարի տնտեսումով ապրանքներ, կամ՝

11.2 հանդիսանում են 20000 (քսան հազար) դրամ և ավել արժեք ունեցող ապրանքներ, այդ թվում՝ «Թեժ գին», «Նոր գին» և այլ՝ հատուկ առաջարկների տեսքով ներկայացված ապրանքները:

12. Սույն թվականի **ապրիլի 27-ից մայիսի 17-ը ներառյալ Գումարի տնտեսումով ապրանքի** կամ **Խաղարկության մասնակցության ապրանքի** գնման դիմաց Գնորդը հնարավորություն է ստանում շահելու TREK ապրանքանիշի արժեքավոր հեծանիվ, մասնակցելով սույն պայմաններում ներառված՝ **«TREK հեծանիվների խաղարկության կանոններ»**-ով սահմանված կարգով անցկացվող խաղարկությանը:

13. Ակցիայի հետ համատեղ չեն գործում՝

- «Յուրոմ – Ամերիա բանկ» համատեղ վարկային քարտը,
- ԶԻԳԶԱԳԻ «Հաջողության Անիվ» ակցիայի շրջանակներում Հաճախորդի կողմից ստացված 7% և 10% զեղչի քարտերը:

14. Ակցիայի հետ համատեղ չեն գործում՝

14.1 «Համակարգիչ բոլորին» ապառիկի ակցիան՝ Գումարի տնտեսումով ապրանքների և «Թեժ գին», «Նոր գին» և այլ՝ հատուկ առաջարկների տեսքով ներկայացված ապրանքների մասով:

14.2 «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ կողմից ապառիկ վարկավորումը՝ Գումարի տնտեսումով ապրանքների մասով:

15. Ակցիայի գործողության ընթացքում ԶԻԳԶԱԳԸ կարող է փոփոխել Ակցիայի պայմանները:

16. Ակցիայի պայմանների վերաբերյալ պաշտոնական պարզաբանումները և պայմանների մեկնաբանությունները ԶԻԳԶԱԳԻ անունից կատարում է ԶԻԳԶԱԳԻ տնօրինությունը և վաճառասրահի մենեջերը:

17. Ակցիայի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել ԶԻԳԶԱԳԻ վաճառասրահներ կամ զանգահարել՝

- Երևան, Չարենցի 24, հեռ. (010) 570209, աշխ. ժամեր՝ 10:00-20:00,
- Երևան, Մաշտոցի 24, հեռ. (010) 537675, աշխ. ժամեր՝ 10:00-20:00,
- Երևան, Սայաթ-Նովա 20, հեռ. (010) 542757, աշխ. ժամեր՝ 10:00-20:00,
- Երևան, Ծիծեռնակաբերդի խճ. 3, «Դալմա Գարդեն Մոլ», հեռ. (060) 461010, աշխ. ժամեր՝ 10:00-22:00,
- «Զվարթնոց» միջազգային օդանավակայան, հեռ. (060) 373717, աշխ. ժամեր՝ շուրջօրյա:

18. TREK ՀԵԾԱՆԻՎՆԵՐԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

18.1 Հեծանիվների խաղարկությունը (այսուհետ՝ «Խաղարկություն») կազմակերպվում և անցկացվում է ԶԻԳԶԱԳԻ կողմից:

18.2 Խաղարկության է ներկայացվում TREK ապրանքանիշի թվով 21 հեծանիվ, ամեն շաբաթ՝ երկուշաբթի օրերին խաղարկվում է թվով 7 հեծանիվ:

Խաղարկության մասնակից դառնալու կարգը՝

18.3 Գնված **յուրաքանչյուր Ապրանքի դիմաց Գնորդը ստանում է Խաղարկության մեկ կտրոն** (այսուհետ՝ «Կտրոն»):

18.4 Ակցիայի ընթացքում Ապրանքների գնումների և դրանց դիմաց սույն պայմաններով սահմանված կարգով Կտրոնների ստացման քանակը **չի սահմանափակվում**: Մասնակցի կողմից սույն պայմաններով սահմանված կարգով **հեծանիվների շահումների քանակը չի սահմանափակվում**:

18.5 Կտրոնը բաղկացած է երկու մասից՝ Գնորդին հանձնվող և խաղարկվող մասերից, յուրաքանչյուրի վրա նշված է Կտրոնի միևնույն, չկրկնվող համարը: Այդ համարը գրանցվում է այն Ապրանքի վաճառքի ձևակերպման հետ, որի դիմաց Կտրոնը հանձնվում է Գնորդին:

- 18.6 Գնորդի կողմից Ապրանքի համար վճարումը կատարելուց, իսկ ապառիկ կարգով գնելու դեպքում՝ բանկի հաստատումը ստանալուց և վաճառքը փաստացի ձևակերպելուց հետո գանձապահը գրանցում է Գնորդին որպես Խաղարկության մասնակից: Այդ նպատակով Կտրոնի հանձնվող մասում գանձապահը լրացնում է Խաղարկության ամսաթիվը, իսկ Կտրոնի խաղարկվող մասում՝ Գնորդի անունը, ազգանունը, հեռախոսահամարը և Խաղարկության ամսաթիվը, որից հետո Կտրոնի հանձնվող մասը փոխանցում է Գնորդին, իսկ խաղարկվող մասը Գնորդի ներկայությամբ տեղադրում է Կտրոնների հավաքման ապակյա տարայի մեջ: Գնորդը պատասխանատու է գրանցման ժամանակ ներկայացված տեղեկությունների իսկության համար:
- 18.7 Գրանցվելու և Կտրոնի իր մասը ստանալու պահից Գնորդը ձեռք է բերում Խաղարկության մասնակցության իրավունք և հանդիսանում է Խաղարկության մասնակից (այսուհետ՝ «Մասնակից»):
- 18.8 Եթե Գնորդը վերադարձնում է այն Ապրանքը, որի գնման ժամանակ ստացել էր Կտրոն, կամ փոխանակում է այլ՝ Ակցիային չմասնակցող ապրանքի հետ, ապա նա կորցնում է սկզբնական գնված Ապրանքի համար ստացված Կտրոնի մասով Խաղարկությանը մասնակցելու իրավունքը, իսկ Կտրոնի խաղարկվող մասը հանվում է Խաղարկությունից:
- 18.9 Գնված Ապրանքը այլ Ապրանքով փոխանակելու դեպքում Գնորդը պահպանում է սկզբնական գնված Ապրանքի դիմաց ստացված Կտրոնով Խաղարկությանը մասնակցելու իրավունքը, և նոր Ապրանքի դիմաց Կտրոն չի ստանում:
- 18.10 **Յուրաքանչյուր Կտրոն մասնակցում է միայն դրանում նշված ամսաթվին անցկացվող Խաղարկությանը:** Այդ Խաղարկության ավարտից հետո մասնակցած և շահում չապահովված Կտրոնները պահպանվում են ևս հինգ օր, որից հետո ոչնչացվում են:
- 18.11 Գնորդի կողմից Կտրոնի կորստի դեպքում կրկնօրինակ չի տրամադրվում:
- 18.12 ԶԻԳԶԱԳԻ աշխատակիցները չեն կարող հանդիսանալ Խաղարկության մասնակից:

Խաղարկության անցկացման, շահումների վերաբերյալ տեղեկությունների ներկայացման և շահողների ճանաչման կարգը՝

- 18.13 Ակցիայի ընթացքում անցկացվում է երեք Խաղարկություն հետևյալ ամսաթվերին՝
- **առաջին Խաղարկության ամսաթիվ՝** 04.05.2015թ., որին մասնակցում են 2015թ. ապրիլի 27-ից մինչև մայիսի 3-ը ներառյալ կատարված գնումների դիմաց ստացված Կտրոնները,
 - **երկրորդ Խաղարկության ամսաթիվ՝** 11.05.2015թ., որին մասնակցում են 2015թ. մայիսի 4-ից մինչև մայիսի 10-ը ներառյալ կատարված գնումների դիմաց ստացված Կտրոնները,
 - **երրորդ Խաղարկության ամսաթիվ՝** 18.05.2015թ., որին մասնակցում են 2015թ. մայիսի 11-ից մինչև մայիսի 17-ը ներառյալ կատարված գնումների դիմաց ստացված Կտրոնները:
- 18.14 **Խաղարկությունների անցկացման վայրը՝**
«Զիգզագ Մեգասթոր», հասցե՝ Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3, Դավա Գարդեն Մոլ,
Խաղարկության սկիզբը՝ ժամը 19:30:
- 18.15 Մասնակիցները կարող են մասնակցել Խաղարկության անցկացման միջոցառմանը անմիջական ներկայությամբ կամ տեղեկանալ Խաղարկության արդյունքների մասին սույն կանոններով սահմանված կարգով:
- 18.16 Խաղարկությանը շահած Կտրոնների համարները և խաղարկված հեծանիվների մակնիշները ներկայացվում են անմիջապես Խաղարկության անցկացման ժամանակ, ինչպես նաև տեղադրվում են www.zigzag.am կայքում և ԶԻԳԶԱԳԻ ֆեյսբուքյան պաշտոնական էջում: Միևնույն ժամանակ շահող Մասնակցի Կտրոնում գրանցված հեռախոսահամարին ԶԻԳԶԱԳԻՑ ուղարկվում է կարճ հաղորդագրություն շահումի մասին: Խաղարկության վերաբերյալ տեղեկություններ են տրամադրվում նաև Զիգզագ Մեգասթորի (060) 461010 հեռախոսահամարով:

18.17 Շահումը ստանալու նպատակով Մասնակիցը պետք է Խաղարկության օրը կամ դրան հաջորդող հինգ օրվա ընթացքում ներկայացնի շահած Կտրոնը Զիզգագ Մեզասթոր, ժամը 10:00-ից մինչև 22:00: Մահմանված ժամկետում շահած Կտրոնը չներկայացվելու դեպքում շահումը համարվում է չեղյալ և վերականգնման ենթակա չէ:

18.18 **Մասնակցին շահող ճանաչելու և շահումը հանձնելու երկու պարտադիր պայմաններն են՝**

- Մասնակիցը շահած համարով Կտրոնի իր մասը պետք է ներկայացնի Զիզգագ Մեզասթոր,
- այդ ժամանակ Մասնակիցի կողմից հնչեցված անունը, ազգանունը և հեռախոսահամարը պետք է ճշգրիտ համապատասխանեն շահած Կտրոնի խաղարկված մասում գրանցված տվյալներին:

Սույն կետում նշված երկու պայմաններից որևէ մեկը չապահովելու դեպքում Մասնակիցը շահող չի ճանաչվում և շահումը նրան չի հանձնվում:

18.19 Խաղարկության օրը ԶԻԳԶԱԳԻ բոլոր վաճառասրահներում նախորդ շաբաթվա ընթացքում հավաքագրված Կտրոնները տեղափոխվում են Զիզգագ Մեզասթոր և տեղադրվում են վիճակահանության թմբուկի մեջ:

18.20 Խաղարկության սկզբում վարողը ներկայացնում է Մասնակիցներին Խաղարկության հիմնական կանոնները, որից հետո ներկայացնում է խաղարկվող առաջին հեծանիվը և հրավիրում է Մասնակիցներից ցանկություն հայտնող որևէ անձի՝ վիճակահանություն կատարելու:

18.21 Վիճակահանություն կատարող Մասնակիցը թմբուկի մի քանի պտույտից հետո պատահականության սկզբունքով, առանց թմբուկին նայելու, հանում է մեկ Կտրոն և վարողը բարձրախոսով հայտարարում է շահող Կտրոնի համարը:

18.22 Եթե վիճակահանությանը ներկա գտնվող Մասնակիցը տեղում ներկայացնում է շահած համարով Կտրոնի իր մասը և իր կողմից հնչեցված անունը, ազգանունը և հեռախոսահամարը ճշգրիտ համապատասխանում են Կտրոնի խաղարկված կեսին գրանցված տվյալներին, ապա շահումը հայտարարվում է կայացած և խաղարկված հեծանիվը հանձնվում է Մասնակցին:

18.23 Վիճակահանության գործընթացը նույն կարգով իրականացվում է ևս վեց անգամ՝ մինչև տվյալ Խաղարկության համար ներկայացված յոթ հեծանիվի խաղարկության ավարտը:

18.24 Վիճակահանության ընթացքում չներկայացված շահող Կտրոնների և շահումների մասին տեղեկությունները մինչև Խաղարկության հաջորդ օրվա ավարտը հրապարակվում են սույն Կանոններով սահմանված կարգով:

18.25 Խաղարկության կանոններն իրենցից ներկայացնում են հրապարակային օֆերտա Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի և 453-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ: Սույն կանոններին համապատասխան՝ որպես Խաղարկության Մասնակից գրանցվելը համարվում է օֆերտայի ակցեպտ: Խաղարկությանը մասնակցելու համար գրանցվելով Մասնակիցը տալիս է թույլտվություն իր անձնական տվյալները Խաղարկության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում պահելու վերաբերյալ: Սույն օֆերտայի գործողության ժամկետը համընկնում է Խաղարկության անցկացման ժամկետի հետ: